ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

№ ԴԴ-3-Ե-3717

« 20 » մայիսի 2025թ.

«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Դանիելյան,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար դատարկ սկավառակի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/07» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում.

- բացակայում է (կցված չէ) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (Հավելված N 1.3), ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) չէ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը,
- դիմում-հայտարարության (Հավելված N 1) մեջ կազմակերպության գործունեության հասցեն թերի է լրացված,
- դիմում-հայտարարության (Հավելված N 1) մեջ «մասնակցի ռուսերեն լեզվով անվանումն է» դաշտում նշված է մասնակցի հայերեն անվանումը, այնինչ՝ անհրաժեշտ է նշել մասնակցի ռուսերեն անվանումը,
- դիմում-հայտարարության (Հավելված N 1) մեջ «ղեկավարի պաշտոնը, ղեկավարի անուն ազգանունը» դաշտում նշված չէ ղեկավարի պաշտոնը,
- դիմում-հայտարարությունը (Հավելված N 1) հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, եթե մասնակցի կողմից ներկայացվող հայտում ներառվող փաստաթղթերը հաստատվում են լիազորված անձի էլեկտրոնային ստորագրությամբ, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը (լիազորագիրը):

Վերոգրյալով պայմանավորված, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/07» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը առաջարկում եմ մինչև սույն թվականի **մայիսի 21-ը ներառյալ** շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/07» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Հովհաննիսյան
Հեռ.՝ (+37410) 511-774